

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ»
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ **-Լ

31/03/2014թ

**ԱՊՊԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՌԿԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՇՏԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և ղեկավարվելով «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ կանոնադրությամբ՝ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության խորհուրդը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է .

1. Հաստատել «ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվության շտկման գործընթացի նկարագրություն» կանոնները՝ համաձայն հավելվածի (կցվում է)»

**«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ՝**

Ներսես Երիցյան

**«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ
խորհուրդի 2014թ թիվ *-L որոշման հավելված**

ԲԱԺԻՆ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Սույն կանոններով սահմանվում են՝

1. ՃՈ-ի կողմից տուգանման արդյունքում բացահայտված ԱՊՊԱ ՏՀ-ում առկա տեղեկատվության շտկման գործընթացի կարգը և պայմանները,
2. ԱՊՊԱ ՏՀ-ում առկա տեղեկատվության արժանահավատության ստուգման և ճշգրտման կարգը:

ԳԼՈՒԽ 2

ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն կանոններում օգտագործվող հիմնական հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստով՝

1) **Օրենք՝** «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

2) **ԱՊՊԱ՝** ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն,

3) **ԱՊՊԱ ՏՀ՝** ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ,

4) **Բյուրո՝** «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միություն,

5) **ապահովագրական ընկերություն՝** Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերություն,

6) **ՃՈ՝** ՀՀ ճանապարհային ոստիկանություն,

7) **տուգանված քաղաքացիներ՝** ԱՊՊԱ ՏՀ-ում տեղ գտած թերությունների պատճառով տուգանված քաղաքացիներ,

4. Սույն կանոններում օգտագործված այլ հասկացություններն ունեն Օրենքում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ 2

**ՃՈ ԿՈՂՄԻՑ ՏՈՒԳԱՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԵՎ ԱՊՊԱ ՏՀ-ՈՒՄ
ԱՌԿԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՏԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

ԳԼՈՒԽ 3

**ԲՅՈՒՐՈՅԻ, ԲՅՈՒՐՈՅԻ ԱՆԴԱՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ
ԱՊՊԱ ՏՀ-ՈՒՄ ԱՌԿԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՏԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

5. ՃՈ-ն, տուգանված քաղաքացիներից ապահովագրություն ունենալու վերաբերյալ իրենց փաստարկները պահպանելով իր մոտ, հավաքագրում է ԱՊՊԱ ՏՀ-ում առկա սխալ տեղեկատվության վերաբերյալ կուտակված տեղեկատվությունը,

6. Բյուրոն, ԱՊՊԱ ՏՀ մուտքագրվող և պահպանվող տեղեկությունների ամբողջականության և արժանահավատության պահպանման նպատակով, ՃՈ-ից ստանում է ԱՊՊԱ ՏՀ-ում առկա սխալ տեղեկատվության վերաբերյալ կուտակված տեղեկատվությունը,

7. Բյուրոն յուրաքանչյուր ապահովագրական ընկերության գծով առանձնացնում և տրամադրում է վերջիններիս կողմից ԱՊՊԱ ՏՀ-ում մուտքագրված սխալ կամ կասկածելի տեղեկատվության վերաբերյալ տեղեկությունները՝ սահմանելով դրանց վերացման համար վերջնաժամկետ:

8. Համապատասխան ապահովագրական ընկերությունը ստուգում է ստացած տեղեկատվությունը և իր կողմից ԱՊՊԱ ՏՀ ներկայացված տեղեկատվության հետ անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում 7-րդ կետով սահմանված ժամկետներում համապատասխան ուղղումներ է կատարում ԱՊՊԱ տեղեկատվական համակարգում:

9. Սույն կանոնների 7-րդ կետով սահմանված ժամկետում ԱՊՊԱ ՏՀ-ում կատարված շտկումների կատարելուց հետո, դրանց վերաբերյալ ապահովագրական ընկերությունները անմիջապես հաշվետվություն են ներկայացնում Բյուրո և ԱՊՊԱ ՏՀ տեխնիկական և տեղեկատվական սպասարկումը իրականացնող անձին:

10. ԱՊՊԱ ՏՀ տեխնիկական և տեղեկատվական սպասարկումը իրականացնող անձը համադրում է ներկայացված հաշվետվությունները ԱՊՊԱ ՏՀ-ում փոփոխված տեղեկությունների հետ և արդյունքների մասին տեղեկացնում է Բյուրոյին,

11. Իրականացված միջոցառումների (համաձայն սխեմայի) արդյունքների վերաբերյալ Բյուրոն տեղեկացնում է ՃՈ-ին համապատասխան հաշվետվությունների տեսքով:

ԳԼՈՒԽ 6

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12. Տուգանված քաղաքացիները ապահովագրություն ունենալու վերաբերյալ իրենց փաստարկները պարտավոր են ներկայացնել ՃՈ, ուստի ԱՊՊԱ ՏՀ-ում առկա տեղեկատվության շտկման առաջնային աղբյուր է հանդիսանում ՃՈ-ում կուտակված տեղեկատվությունը,

13. Սույն կանոնների իմաստով ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային օրերին՝ ժամը 16:00-ից հետո, ներկայացված հաշվետվությունները համարվում են ստացված հաջորդ աշխատանքային օրը:

14. Որևէ տեխնիկական խնդրի պատճառով Սի-Բի-Էյ-նեթ համակարգի աշխատանքի խափանման դեպքում սույն կանոններով սահմանված բոլոր հաշվետվություն փոխանցվում են էլեկտրոնային փոստով կամ առձեռն՝ ստացման մասին ստորագրությամբ:

ԱՊՊԱ ՏՀ-ում առկա տեղեկատվության շտկման գործընթացի սխեմա

